Գ. ՏԱՐԻ ՆԻՒ ԵՈՐՔ ՆՈՅԵՄԲԵՐ 1 1893 ԹԻՒ 20

ՀԱՅՔ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

Editor, M. S. Gabriel, M. D. 202 W. 23d St. New York *Խմբագիր, Տր. Մ. Ս. Գաբրիէլեան*

ՕԾՈՒՄՆ ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Էջմիածին Հոկտ. 9 (Հեռագիր)

Նորին Սրբազնութիւնն Խրիմեան Հայրիկ կաթողիկոս Հայոց օծուեցաւ երէկ ի ներկայութեան 30,000 հոգւոյ։ Եօթն մահմետականներ, այլ և այլ երկրաց ներկայացուցիչ, ուղղերձներ մատուցին։

(ՏԷՅԼԻ ՆԻՒԶ)

Մեր ներկայ թուոյ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ *երկայն է, բայց կը յուսամք թէ* ԱՄԵՆ *ոք պիտի կարդայ զայն ուշի ուշով և ծայրէ ի ծայր։*

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ *վերայ խորագրով ուսումնասիրութիւն մի կ'անեմք Հայքի մէջ, շարունակելի, առթիւ հինգհարիւրերորդ տարեդարձի մահուան Հայոց վերջին Թագաւոր Լեւոնի, որ վախճանեցաւ 1393 Նոյեմբերին։ Յոյժ ի դէպ է յետհայեաց ակնարկ մի արձակել Հայութեան անցելոյն և սովրիլ մեր պատմութեան դեռ անուսումնասիրեալ կարեւոր դասերն։*

Զինուորական կրթութեան վարժոցին աշակերտելու համար մեզ հաղորդուած անուններն դեռ հազիւ քառասուն ևվեցի հասած են։ Ցաւալի դանդաղութեամբ մի շատեր չեն յայտնած իրենց յօժարութիւն տակաւին, ինչ որ կրնային անել մի քարտիւ։

(Ի Վիեննա, վեհափառին իպատիւ տրուած նախաճաշիկին քարտէսն:)

ՆԱԽԱՃԱՇԻԿ

Ի ՊԱՏԻՒ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԵԱՆ
ՏԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ
ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Ա.

ՄԵՐՍ ԱՄԵՆԱՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՅՐԻԿԻՆ

Մատուցեալ

յԱզգայնոց՝ գումարելոց ի մայրաքաղաքին Վիեննայ. ի ԺԲ. Նաւասարդի 4384 թուականին Հայոց. և յ3 Սեպտեմբերի (Ն. Տ.) 1893 թուականին Փրկչին.

Համաղամբ-Ակրատ. Տիգրանակերտի
Գինի Վանայ
Տառեխ Վանայ Գինի Երուսաղէմի
Խորոված ոչխարի Երեւանայ
Գետնախնձոր Գանձակայ
Ոլոռն Մշոյ
Աղցան Կարնոյ
Փիլաւ Ուրմիոյ Գինի Էջմիածնի
Մածուն Շիրակայ
Խաղող Կիլիկիոյ
Փրփրագինի Վասպուրականի
Սուրճ Արաբահայոց.

ՀԱՅՔ

HAÏK

Entered as second-class mail matter at P. O., New York, N. Y.

Address Հասցէ
Editor of "Haïk," 202 West 23 St. New York U. S. America.
կամ Redaction de la Revue "Haïk," ևն։

«Հայք»ի իւրաքանչիւր թիւը կը բաղկանայ 16 երեսներէ, և կը հրատարակուի ամիսն երկու անգամ։

Տարեկան բաժնեգինն է ամեն երկրաց համար երկու տոլար կամ 10 ֆրանք

Կանխիկ

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայտարարութիւն "Հայք"ի առ Հայ Հայրենասէրս Ընդ Հանուր.— Խորհրդածութիւնք Հայոց Պատմութեան վերայ. յօդ. Ա. — Բացուած է "Հայք"ի բաժանորդագրութիւնն 1894 տարւոյ.— Ամերիկեան քաղաքացւոց իրաւունքները ի Թուրքիա.— Նամակ բանտէն ազատուած Հայէն. — Ամերիկայի Հայերն. Հայ գործաւորք կը հալածուին Օպրնի փողոցներուն մէջ.—

Կը խնդրեմք որ մընի օրտրրի կամ մանտա տը փոսթի միջոցաւ խմբագրութեանը դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օֆիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցուներլու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ։

NEUMANN BROTHERS

Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի

76 E. 9դ Փողոց
Պրոտուէյի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տոլարով, անունն ալ Հայերէն գրելով։ Կը կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տեսակ գրքեր։

ՅԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՔԻ

ԱՌ ՀԱՅ ՀԱՅՐԵՆԱՍԷՐՍ ԸՆԴ ՀԱՆՈՒՐ

Ա.

Հայե՛ր,

Երբէք մտածե՞ր էք թէ ժողովուրդ մի կրնայ իւր արդար դատն այնպիսի անխոհեմ կերպիւ պաշտպանել որ կորուսանէ զայն։ Թէ ազգ մի կարող է իրեն աւելի թշնամի լինիլ քան զիւր յոռեգոյն թշնամիներն։

Սոսկալի է ասել, բայց պիտի ասեմ թէ ահա մեք այդպիսի ժողովուրդ մեմք։ Եթէ այդպիսի ժողովուրդ մի չեմք, մեր մէջէն ոմանք զմեզ այնպիսի կ'երևցուներն աշխարհի։

Այս ամբաստանութիւն խիստ ծանր է. ուշադրութեամբ լսեցէք։

Գիտէք թէ Տաճկաստանի մէջ, մանաւանդ Դում-գափուլի դէպքէն իվեր, մեր ժողովրդեան վիճակն ամ քան զամ կը վատթարանայ, և այս տարի սոսկումն ու արհաւիրք ամեն կողմ սփռուած են առաւել քան երբէք։ 4-5 հարիւր տարիէ հետէ Օսմանցւոց լուծն այսքան խստութեամբ ճնշած չունէր զմեզ։ Ապաքէն Թուրքն երբէք սիրած չէ զիւր Հայ դրացին, և Բ. Դուռն երբէք ի սրտէ չէ բաղձացած իւր կավուր հպատակներն յառաջադէմ տեսնել. բայց, աներկրայ, ոչ երբէք այսքան ատած էր զմեզ և ոչ երբէք նայած էր Հայոց իբրև թշնամեաց իւր իշխանութեան և իւր երկրին խաղաղութեան։

Այժմ Օսմանցիք կը բաղձան ամենայն հնարիւք զ Հայութիւն սպառել, դիակնացուներ իրենց ոտից տակ։ Եւ զայս կ'ուզեն անել ոչ լոկ չարագործի այլև ինքնապաշտպանի բնազդմամբ, և իրենց խիղճ կը հանդարտեցուներն այն համոզմամբ թէ իրաւունք ունին իրենց պետութեան և դահուն թշնամիներն ջնջել, թէպէտ և իրենց նախկին հպատարիմ հպատակներն լինին։ Այս է մրցանք վասն գոյութեան։

Թէ Թուրքերն սխալ հասկացած են մեր դիտաւորութիւն, և թէ բարբարոս խժդժութեամբ կը վարուին մեզ հետ, այդ ալ անուրանալի է, բայց հարցն այժմ սա է թէ արդեօք մեր Հայերս մեր խօսքով և մեր ընթացքով տեղի չտուի՞նք Թրքին թիւրիմացութեան և վերջին խուժադուժ հարուածներուն։

Պատասխանե՛նք այդ հարցի։

Մեր մէջ յառաջադէմ յեղափոխական գործունէութեան իջնող երկու մարմիններ եղած են ցարդ, Դաշնակցականք (Դրօշակ) և Սոսիալիստք (Հնչակ)։ Թէպէտ թուով փոքրիկ, հանեցին աղմուկ մեծ, և Թրքաց կասկածոտ և Հայոց յուսալից ուշադրութիւնն գրաւեցին։ Ի՞նչ խօսեցան և ի՞նչ գործեցին։ Սոսիալիստք քարոզեցին յեղափոխութիւն և ընկերվարականութիւն միանգամայն, սպաննեցին մի քանի լրտեսներ, և ասդ անդ յեղափոխական խլրտումներ յառաջ բերին։

Ի՞նչ գաղափար ձևացուցին ԹՈՒՐՔ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆՆ և Թուրք հասարակութիւնն այդ խլրտմանց նկատմամբ։ Կառավարութիւն և ժողովուրդ այն համոզում ունեցան թէ Հայոց առաջնորդ գործիչներն եւրոպա կրթուած սոսիալիստ, նիհիլիստ, անարքիստ են, որք կ'ուզեն ամեն ինչ վեր ի վայր շրջել, Սուլթանն գահընկէց եղած և օսմանեան պետութիւնն կործանեալ տեսնել, և վերջապէս նորա աւերակաց վերայ հիմնել Հայոց իշխանութիւնն ռամկավարական։

Միթէ Թուրքն կը հասկանա՞յ թէ սոսիալիստի քանի՞ տեսակ կայ և թէ ոչնչականք և անիշխանականք ինչո՛վ կը տարբերին ընկերվարականներէ։ Դիցուք թէ հասկանար թէ դոքա իրարմէ տարբեր թէև իրարու սահմանակից դրութիւններ են. սակայն պիտի դարշէր սոսիալիստներէն և պիտի ջանար ճմլել զայնս։

Պալատն որ արդէն վարչական ինքնօրինութիւն խնդրող Հայերուն անգամ խեթիւ կը նայի, միթէ զարմանալի՞ է որ մոլեգին գայրացմամբ վարուի անոնց հետ որք ինքնօրինութեամբ գոհ չլինելով անկախութիւն կը պահանջեն և հայկական գաւառաց բարուոք վարչութեան խնդրէն դուրս օսմանեանց երկրին և գահուն վերաբերեալ ընդհանուր խնդրոց միջամուխ լինելու երևոյթն ունին, քայլինքն ամեն կարգի վէճ, յուզում, հակառակութիւն քաջալերելու յօժար խռովայոյզներ կ'երեւին։

Եղբա՛յրներ, միթէ խեղճ հայ ժողովուրդն իւր բուն խնդրոյն համար հարկաւոր եղած նեղութիւնն կրելու կարողութիւն ունի՞ որ ուրիշներուն խնդրոց համար ալ նորա չարչարեալ և տկար մարմնոյն վերայ աւելորդ և ճմլիչ բեռներ կը դիզէք։ Եթէ ձեր նպատակ զիրենք թաղել է, այն ուրիշ խնդիր։

ՀԱ՞Յ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ վերայ ինչ եղած է և ինչ պիտի լինի այդ յեղափոխական գործիչներու ազդեցութիւնն։

Առաջին ազդեցութիւնն է դրդուել և յուսադրել։ Ուրիշ ժողովուրդք ապստամբելով յաջողեր են, պէտք է Հայք ալ յանձն առնուն ոտքի ելնելու հարկն ու զոհողութիւններն. այդ է վարդապետութիւնն։ Այդ վարդապետութիւն յիրաւի ոգեւորիչ ալ կը լինի երբ վարդապետողն կը հասկցունէ թէ ինքն շատ խելք, շատ ոյժ և դրուէն ալ բարեկամ կամ աջակից ունի։

Այս ոգեւորիչ տպաւորութիւնն մի քանի տեղեր յառաջ բերած է ոտքի ելնելու տրամադրութիւն։ Ժողովուրդն սիրտ ի թունդ օրեր անցուցած է ոտքի ելնելու վայրկանին սպասելով. և ապա չէ կրցած ոտքի ելնել։ Արդիւնքն եղած է հակազդեցական, և գրգռման յաջորդած է լքում կամ յուսաբեկ ցրտութիւն։

Արաբկերի, Մարսուանի և Կեսարիոյ կողմերն ոտքի ելնելու տրամադրութիւնն հայեցողական շրջանէն դուրս ելնելու միտած է և մի քանի գործեր, յայտարարութիւններ փակցունել, հրոսախմբային յարձակումներ, սպանութիւններ տեղի ունեցած են։

Ա՞յդ կարգի գործնական փորձերու արդիւնքն ինչ եղած է։ Շօշափելի արդիւնքն շատ ողբալի է. ամբողջ գաւառներ սարսեցան սարսափեցան, հարիւրաւոր Հայեր բանտարկուեցան, մեծ մասն բոլորովին անմեղ, հազարաւոր ոսկիներու կորուստ ելաւ հայու քսակէն, մի քանիք կախաղան հանուեցան և աւելի շատեր ալ յանդարձ մահաբեր աքսոր յղուեցան։

Շատ կը խաբուիմք եթէ ենթադրեմք թէ նոյն տառապանաց, այդ չափազանց ճնշմանց տակ, ժողովուրդն [illegible]

օգուտ քաղած լինի, սիրտ առած լինի և քաջալերուած։

Ոչ մի ժողովուրդ կրնայ քաջալերուիլ ձախողութենէ, և նուազ և՛ն Հայ ժողովուրդն, որ անհուն դժուարութեամբ համոզուած լինելէ յետոյ թէ իւր բազմադարեան թմրութիւնն պէտք է թօթափէ, ճիգ մի կը փորձէ և. չարաչար կը կոխոտուի ոտքի տակ։

Ճիգն անողն աննչան թիւ մէ գրգռեալ երիտասարդաց, բայց պատժուողն ամբողջ հասարակութիւնն է։ Երկիւղի և կասկածանաց պատիժն ամեն հայ կը կրէ, իսկ նիւթական նեղութիւնն չատերն։ Թուրք կառավարութիւնն կը վարուի այս դէպքերու մէջ որպէս հրդեհ մարելու վազողներն, որք ոչ միայն կրակ առած տունն այլ և դրացեաց տներն կը քակեն որպէս զի հրդեհն չտարածուի։

Հայոց ապստամբական բոցն ամեն անգամ չնչին, դիւրաշէջ բոց մէ եղած նման տղայական հրավառութեան, բայց կառավարութեան պատիժն անհամեմատ խիստ և սարսափելի եղած է Հայոց վերայ։ Որպէս թէ քիչ կը հարստահարուէր մեր թշուառ ժողովուրդ, պէտք է տղայական ցոյցերու համար ալ կրկնապատկուէին իւր տառապանք։

Եւ այս ազգասիրութի՞ւն, հայրենասիրութիւն. յեղափոխական նախապատրաստութիւն կը կոչուի...

ԵՒՐՈՊԱՑԻՈՑ վերայ ինչ տպաւորութիւն կը գործեն մեր այս տխմար ընթացք։

Ի հարկէ լրագիր ընթերցող Եւրոպական հասարակութիւնն շատ որոշ չի հասկնար մեր շարժմանց և նեղութեանց հանգամանքն. ընդհանուր համոզումն այն է թէ Թուրքիոյ մահմետական և Թուրք կառավարութիւնն շատ դէշ կը կառավարէ քրիստոնեայ հպատակներն. և կը նեղէ զայնս։ Գալով Եւրոպացի պետական և դիւանագիտական շրջաններուն, անդ բաներ տարբեր է, զի աւելի յստակ տեսութիւն և ճիշդ տեղեկութիւններ կան, և մեր շարժումներու շարժառիթն ու նպատակն արդարանալի համարողներն անդամ չեն կարող մեր շարժումներն դովել և մեր ընթացքին հաւնիլ։ Նոքա մեծ մասամբ այն համոզումն ունին թէ Հայք ցրուած և անզէն լինելով չեն կարող ապստամբիլ։ Երբ կը լսեն թէ Հայոց մէջ պնդողներ կան ապստամբութեան հարկին և հնարաւորութեան վերայ, սկեպտիկօրէն կը դիտեն և երբ կը տեսնեն թէ որպիսի ձախող շարժումներ կը լինին մեր մէջ, բնական է որ այն եզրակացութեան հասնին թէ Հայքս ոչ միայն տկար եմք այլ և տխմար, ոչ միայն ցրուած այլ և ցնորած, և կը նմանցուցնեն զմեզ աւանակի որ զռալով կը վազէ դայլին առջեւ եւ կը փարատուի։

Մեր դատին վնասաբեր արարք կամաց կամաց Եւրոպական հասարակութեանն ալ ծանօթ լինիլ սկսած են։ Ահասարսիկ կարևոր հեռագիր մի որ Լոնտոնի Տէյլի Նիւզ ազատական լրագրին մէջ հրատարակեցաւ, Մարսուանէն «վստահելի աղբիւրէ» առնուած, որպէս կ'ասէ թղթակիցն, որ Կ.Պոլսէն կը հեռագրէ Հոկտ. 9 ին։

«..Հայ յեղափոխականք, կը հեռագրէ վերջապէս ծանր յարձակում կրած են։ Հայք ոմանք, և մի քանի ուրիշ չարաբարոյք, Հայաստանի յոռի կառավարութենէն և անոր հետեւանքն եղող յուսեալ վիճակէն օգուտ քաղելով, ամիսներէ իվեր կ'ապականէին երկիրն և իրենք զիրենք յեղափոխական կը կոչէին։ Թուրք պաշտօնեայք նոցա վերայ չյարձակեցան, և նոքա հանդանակութիւններ կորզեցին խաղաղասէր հայերէն։ Անգլիական դեսպանատան ծանօթ դէպքի մի մէջ պահանջուած գումարն մեծկակ էր և սպառնալիք եղած էր թէ որդին պիտի սպաննէին եթէ գումարն զլանար։ Ինչպէս նախորդ հեռագրոց մէջ յիշուած է, հաւանականօրէն 30է արտաքին թիւն այս աւազակաց..։ Սեպ. 20ին սոցա մէկ մասն ի Մարսուան դտնուեցան ի միասին, և յարձակում կրեցին։ Կռիւն տեւեց 10 ժամ, յորում զապթիյէներէն ոմանք վիրաւորեցան և ոմն սպաննուեցաւ։ Աւազակաց հինգն բռնուեցան, և երեքն սպաննուեցան։ Ռուսահայ մի, որ առաջնորդն էր, ի համարի ձերբակալելոց կը գտնուէր, բայց հետեւեալ օրն մեռաւ իւր վէրքերէն։ Նամակագիրն կ'ասէ թէ այս արդեան վերայ ոչ ոք աւելի կ'ուրախանայ քան նոյն ինքն Հայերն որք երկար ատենէ իվեր կը խնդրէին որ Թուրք պաշտօնեայք՝ փոխանակ օրինաւէր քաղաքացիներն տագնապելու, յարձակէին աւազակաց վերայ որոց արարքն շարունակակն յանդիման էր ամենուն։»

Վերոյիշեալ տողերն բիւրաւոր եւրոպացիներ կարդացին անշուշտ, դժուար չէ գուշակել թէ ինչ տպաւորութիւն կրեցին, թէև հեռագիրն շատ գգուշաւոր ոճով գրուած է, ցուցնելու համար թէ

յեղափոխական աւազակներն հայ հասարակութեան ալ անհամակրելի էին։

Դոքա արժանի՞ էին աւազակ կոչուելու. յայդմ կրնայ անհամաձայնութիւն լինիլ։ Մեք կը պնդեմք թէ բռնի դըրամ առնլու այդ փորձն աւազակային է, ինչ ալ որ լինի նպատակն, և թէ աւազակութիւնն պէտք է միշտ իւր անունովն կոչուի։

Մտածեցէ՛ք, ազգն կը դանդատի թէ Թուրք կառավարութիւնն չի պատժեր աւազակներն, թէ ժողովուրդն պէկերու, քրդերու և կաշառակուրծ պաշտօնէից յափշտակութեանց մատնուած է—և ահա այդ բաներու դարման տանելու, բարեկարգութեան, ինքնօրինութեան մեր ախոյեաններն իրենք ալ կ'ելնեն պէկի և քրդու դեր կը կատարեն...։ Այ՞ն է Եւրոպացւոց համակրանքն գրաւելու կերպն։

Եթէ այս ընթացքի մէջ չարունակեմք, Եւրոպացիք զմեզ պաշտպանել և զմեր դատ ջատագովել անհնար պիտի գտնեն։

Շատ բանիբուն և Հայոց համակիր Ամերիկացի մի Անգլիայէն վերջերս անցնելով՝ պատեհութիւն ունեցած էր նշանաւոր մի քանի Անգլիացւոց հետ խօսելու Հայոց խնդրոյն վերայ, և այն ցաւագին պատասխանն ընդունած էր թէ Հայոց դատն պաշտպանել աւելի դժուարացած կը դանեն հոյ գործիչներու անվայել և անկարգ արարքներուն պատճառաւ։

Երբ խնդրուած է որ վերջին անցքերուն վերաբերեալ Պլիու Պուքն հրատարակելու վերայ պնդեն հայասէր երեսփոխանք, պատասխան տրուած է թէ այդ հրատարակութիւն կրնայ Հայոց դատին վարկն կոտրելու ծառայել անկարգ գործողութեանց յայտնութեամբ...

Արդէն շատ տխուր կերպիւ զգացինք զայդ վերջերս, երբ եւրոպական մամլոյն աղաղակն, Անգլիական այնքան միջամտութիւնն գրեթէ անօգուտ եղան մեր բանտարկեալներն ազատելու և անմեղներն կախուեցան կամ աքսորուեցան։

Դոքա անմեղ էին և սակայն տխմարութեամբ ոճրագործի վիճակ իրենց վերայ հրաւիրեցին։

Եւրոպայի ո՞ր դիւանագէտն կրնայ պաշտպանել այն Հայեր որոց համար կ'ասուի թէ հակահամիտեան Թուրք կուսակցութեան մի գործի եղած և նոցա տղայական մէկ յայտարարութիւնն ցրուելու ծառայած են։ Կամ թէ ո՞ր քաղաքակիրթ երկրի ժողովուրդ կրնայ թեր ելնել այնպիսի հրոսախմբի որ թրքական փոսթայլն վերայ յարձակում արած և թղթատարն սպաննած է պաշտօնական թղթեր ձեռք բերելու համար։ Ամենոք պիտի վճռէ թէ այդ ապօրինաւոր է, և թէ Ամերիկայի պէս երկրի մէջ ալայդպիսի գործ մեծ ոճիր կը նկատուի։

Մեք այդպիսի արարքք կը ցեխոտեմք մեր սուրբ կոչեցեալ գործն, կ'արատաւորեմք մեր արդար դատն առաջի Եւրոպայի, կամաց կամաց անկարգ սոսիալիզմի և խիզախ անիշխանականի գարշելի հոտեր կը հանեմք, և վերջն ալ կուզեմք որ Եւրոպա մեզ ուշադրութիւն ընծայէ, մեզ համար միջնորդէ, մեզ համար նաւային ցոյց անէ, մեզ փրկէ՛...

Այս անկարգ գործողութեանց ազդեցութիւնն ինչ՞ եղած է և կը լինի նոյն իսկ ԳՈՐԾՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆՑ ՎԵՐԱՑ։

Դաշնակցականաց կուսակցութիւնն իւր սկզբանց և գործոց բերմամբ ինչ վախճանի հասաւ՝ այն յայտնի է։ Այդ կուսակցութիւն ալ Ռուսահայ էր, և ուստալ երիտասարդներու հիմնարկութիւն։ Գում-Գաբուլի դէպքէն յետոյ, երբ Կովկասի Հայք եռ ելան, այդ կուսակցութիւն կազմուեցաւ, և աւելի քան 100,000 ռուբլի ունեցաւ իւր տրամադրութեան տակ։ Դավրեժի և Պարսընդթուրք սահմանագլխոյ միջև էր դոցա բոյն։ Անդ թափառեցան, երագեցին, կերան ու խմեցին, հայ գիւղերու վերայ բեռ եղան իսէր ազատութեան, և երբ իրենց մէկ ընկերն մըտադրեց վերադառնալ ի Տփղիս և իրողութիւններն ծանուցանել, երկու ուրիշ ընկերներ ուղեկցեցան նմա և գիշեր միյանկարծ սպաննեցին զնա ի ճանապարհին։ Նոյն դասու գործիչներ էին որ զԹուխմանեան վարդապետն, Հայաստանի մէկ քաղաքէն խաբնօք դուրս տարին և յօշ յօշ պատառեցին, զի իրենց գործունէութեան տեսակին չհաւանելու քաջութիւնն ունեցած էր։ Հայրենատէր երիտասարդ մ'ալ կարնոյ կողմն սպաննեցին ազգասիրաբար...։ Եւ կուսակցութիւնն, այդպիսի սխրագործութիւններո՞ւ ազդեցութեամբ ինքն իւրքայքայումն փութացոյց։

Հնչակեան կուսակցութիւնն ալ իւր

անդամոց ոմանց աւազակութեամբն, ոմանց ոճրագործութեամբն, այլոց սոսկալի յայտարարութեամբքն, և ամենուն թիւր ուղղութեամբն կը դիմէ նմանօրինակ վախճանի։ Պարզամիտ երիտասարդք ոմանք, Թուրքիոյ մի քանի գաւառաց մէջ, հաւատ ընծայած են տառապեալխառն զըրոյցներու թէ մեծամեծ ուժեր և դրամ զօրութիւնք կան, և թէ շուտով մեծ յեղափոխութեամբ վերջ պիտի տրուի գերութեան։ Մինչև իսկ անդամ մի հրահանգ ընդունած են այս ինչ թուականին ոտք ելնելու և հեռագրական թելերն կտրելու և որ ի կարգին...։ Խե՜ղճ գիւղացիներն այդ օր մի դադար և երկչոտ անկարգութիւն կը գործեն տեղ մի ու կը նըստին վար։ Մեծերն այսպիսի հրահանգներն ու յուսադրութիւններն կ'անուանեն յեղափոխական դաւգլ՛գ, որոյ նպատակն է ժողովուրդն մօտաւոր մեծ գործողութեան մի յուսով ոգևորել։ Եւ ի՞նչ կը լինի անդրագոյն արդիւնքն։ Անզէն և անկար ժողովուրդն կը մնայ անզէն և անկար և ցնորամիտ ոգևորութենէն տակաւ ուշաբերելով կը տեսնէ թէ եղեգնեայ, ոչ երկաթեայ, է ցուպն որում կռթնած էր։ Միւս կողմէն Թուրք ժողովուրդն և կառավարութիւնն տխմար Հայոց վաղածանօթ անզօրութեան վերայ ապստամբութեան բաղձանքն ալ աւելցած տեսնելով՝ արհամարհոտ կատաղութեամբ կը ճմլեն զայնս։ Յեղափոխութիւն պատրաստելու ա՛յնպիսի կերպ մ'է Հնչակեանցն, որ զՀայն չի զօրացներ և չի պատրաստեր յեղափոխելու, այլ Թուրքն անգութ հըսկողութեան կը հրաւիրէ, և այսպէս յեղափոխական ամենայն պատրաստութիւն անհնար կը գործէ։

Հնչակեան կուսակցութիւնն այսպէս բեռնելով ժողովրդեան վերայ սպառիչ տառապանք, տրամասուորելով հայ դատն առաջի Եւրոպիոյ, կը կորուսանէ նաև իւր ազդեցութիւնն և վարկ, և կը քայքայի որպէս իւր քոյր կուսակցութիւնն քայքայեցաւ։

Այս մարգարէութիւն չէ։ Երբ տեսնեմ, որպէս կ'ասէ Գառլայլ, թէ որմնադիրն ծուռ կը շարէ պատն, կրնամ գուշակել թէ ծանրութեան օրէնքն պիտի փլուցանէ զայն երբ պատն այս ինչ բարձրութեան հասնի։

Այս տողեր հայրենասիրաց առ հասարակ տխրութիւն կ'ազդեն և զայնս մասնակից կ'ընեն այն տագնապին և մտատանջութեան զոր ես կը կրեմ ժամանակէ մը ի վեր մանաւանդ՝ տեսնելով մեր դատին նոր կնճռոտումն, գործիչներու ձախող ծառայութիւններն և թրքահայոց վտանգեալ կացութիւնն։ Բայց ի ներկայութեան այս դառն հանգամանաց կոյր ձևանալ և շարունակ քաջալերական եղանակաւ խօսիլ կը լինէր յիմարի գործ։

Յայտնի է նաև թէ Հնչակեան եղբարք ոմանք կարդալով զներկայս կը ցաւին, կը սրտմտին ինձ դէմ։ Խորհուրդ կուտամ այնպիսեաց անկեղծօրէն տեսակցիլ իրենց Հնչակեան ընկերակցաց հետ, վասն զի վստահ եմ թէ իրենց մէջ կան շատեր որք ուղիղ կ'ըմբռնեն միտքս և ողջմտօրէն կը թարգմանեն դիտումս։ Ես ոչ զոք վիրաւորել կ'ուզեմ, ընդհակառակն իմ անձնական յարաբերութիւններ Հնչակեան մեծ և փոքր գործիչներու հետ զորս ճանաչելու պատեհութիւն ունեցած եմ՝ են համակրական և յարգալիր։ Պէտք չէ կարծել թէ նկարագրեալ ձախող և տառապիչ արդիւնքներն բոլորովին Հնչակեան առաջնորդներու ուղղութեան կ'ընծայեմ։ Եւ ոչ այն պարզամիտ համոզումն ունիմ թէ ուրիշ լաւագոյն առաջնորդութեան տակ բնաւ սխալներ չպիտի գործուէին և նեղութիւնք չպիտի գային։ Սխալելն մարդկային է, և սխալի պտուղն դառն է։ Ինչ որ պարզապէս հաստատել ջանացի այն է թէ Հնչակեան կուսակցութեան ձախող արդեանց մեծ մասն յառաջ եկած է սխալ սկզբունքէ, թիւր ուղղութենէ։ Կարելի էր հաստատել զայս երկու եղանակաւ. Հնչակեանց ծանօթ սկզբունքներէն արտածօրէն իջնել ձախող արդիւնքներուն. և դարձեալ ձախող արդիւնքներէն մակածօրէն հանիլ սխալ սկզբանց։ Բայց շատ երկար կը լինէր մտնել այդ երկար տրամախոհութեան մէջ։ Մի բան կայ զոր համառօտիւ ասել պարտիմք, թէպէտ ամեն ընթերցողի հասկանալի չլինի. այս ինքն թէ այդ սխալ սկզբունք պարզ սխալի մի արդիւնք չեն, այլ պետերուն ուսումնական անցեալ ընթացքեն և գիտական միակողմանի բայց խորին համոզմանց։ Զափազանց ոյժ և ուշադրութիւն տուած են քաղաքական տնտեսութեան և սոսիալիստ վարդապետութիւնն այնպիսի աճագին զօ-

րութեամբ տիրած է իրենց իմացողութեան որ անկարող են ուրիշ գիտական, իմաստասիրական սկզբանց այժն ըստ բաւականին զգալ, և չեն գիտեր ըստ արժանւոյն գնահատել այն ազգային, հողեբանական, կրօնական, ցեղաբանական և տանդական ազդեցութիւններն որք տիրող և առաջնորդող այժ ունին Հայ ժողովուրդեան և Թրքաց վերայ։ Երբ գործիչք այդպիսի ահագին գործոններու կարևոր տեղն չտան իրենց հաշիւներու մէջ, ի հարկէ ահագին սխալներ կ'ունենան յարտադրեալս։

Բ

Ընթերցողք տխրութեամբ պիտի հարցնեն թէ ինչ օգուտ է այսպէս քննադատել գործող կուսակցութիւնն և նկարագրել դատին ձախող ընթացքն. ինչ դարման կայ այս չարեաց և ո՞ւր է լաւագոյն առաջնորդ կամ հասուն կուսակցութիւն։

Արդէն մեր գործունէութեան դէմ հնչակեան առարկութիւնն այդ եղած է թէ «ՀԱՅՐը աւելի բացասական դեր է կատարում քան թէ դրական. դուք հայ ժողովրդին անցեալ երկու երեք տարիները ասում էիք թէ այժմեան յեղափոխական կամ հայկական դատի համար աշխատող մարմիններին մի հաւատաք, սպասեցէք մինչև որ տիեզերական միութիւն կազմուի ևն։ Այդ բանը, ի հարկէ, ժողովրդի ոմանց վրայ ազդեցութիւն ունեցաւ, որոնք սպասեցին և սպասում են մինչև հիմա էլ, առանց ոևէ մասնակցութիւն ունենալու յեղափոխական գործի մէջ...։ Իսկ այժմ էլ, երբ բոլոր միւս մարմինները չուրուկ դուրս եկան, ասպարէզից հեռացան, դուք ասում էք հայ ժողովրդին — Հայե՛ր, զգուշացէք Հնչակեաններից, նոքա ոսցիալ-դեմոկրատներ են.....։ Ի հարկէ ձեր փափաքը ուրիշ բան է. ձեր կարծած բարեփոխութիւնները անել մեր ծրագրում ու այդպէսով աւելի մեծ այժ տալ մեր գործին։ Բայց չէ՞ որ Հայքի թ. 18ի մէջ գրած էիք թէ... հասկացաք որ սոսիալիզմը Հնչակեանների սրտի մէջ աւելի խոր տեղ է բռնում քան դուք էիք կարծում։ Ուրեմն ինչո՞ւ ի զուր ջանք թափել չըլլալիք բանը անելու համար։... Կազմեցէք մի ուրիշ ընկերութիւն, ձեր ցանկացած ծրագրով և անմիջապէս գործի սկսեցէք։ Այն պարագայի տակ դուք աւելի կարող էք վնասել մեր կուսակցութեանը, բայց մեր կուսակցութեանը վնասելով, դադարեալ յեղափոխական գործը առաջ տարած կը լինիք, թէև տարբեր ծրագրով։ Զատ ընկերութիւն կազմելով և գործի սկսելով, քննադատեցէք մեր ծրագիրը և ուղղութիւնը, որչափ որ կը փափաքէք, մենք քննադատութիւնից վախեցողներ չենք. միայն թէ մեր հակառակորդները գործ չինեն, մեր չինածը քանդեն ու իրենք աւելի լաւ չինեն, և ոչ թէ քննադատեն, մեր չինածը քանդելու ջանան և իրենք ալ պարապը կենան։»

Մեր Հնչակեան բարեկամի դիտողութիւնն ազնիւ և անկեղծ մարդու դիտողութիւն է։ Փութանք ուրեմն պատասխանել և ցուցնել,

(1) Թէ «Հայքի» դերն ի՞նչ եղած է ցարդ։

(2) Թէ նոր կուսակցութիւն կազմելու ժամն հասա՞ծ է «Հայք»ի համար։

(3) Թէ ինչպիսի կուսակցութիւն է այն զոր «Հայք» կազմել հանդերձեալ է։

Թէ ՀԱՅՐի դերն ի՞նչ եղած է ցարդ։ Ըստ մասին բացասական, բայց նորա դերին բացասական կողմն ալ ծառայութիւն մ'է։ Անհատի և կուսակցութեան թոյլ կամ թիւր կողմն նշանակելով չարխափան պաշտօն կը կատարէ թերթն, զի չի թողուր որ ժողովուրդն այս ինչի անձնական կարծեաց ընծայէ այն չափազանց հեղինակութիւն զոր չունի անհատն, և կամ նուիրէ ինքզինք չափազանց եռանդով կուսակցութեան մի որ իրեն յանձնուած ուժերն բաւական խոհեմութեամբ գործածելու կարող չէ։ Դեր մի բացասական լինելով հանդերձ կրնայ մեծ կարեւորութիւն ունենալ։

Արդար չէ սակայն ասել թէ որովհետև ՀԱՅՐ Հայաստանի մէջ չարժում կամ յեղափոխութիւն առաջ տանելու անձամբ կամ կուսակցութեան մի հետ չէ աշխատեր, իւր դերն բացասական եղած է յաւէտ։ Հայաստանէն դուրս ալ Հայաստան մի կայ։ Մի թէ մե՞ղք գործած է ՀԱՅՐ այն համոզումն ունեցած լինելով թէ արտասահմանեան Հայաստանն պէտք է լինի յեղափոխական Հայաստան, և Թրքական Հայաստանն՝ պահպանողական, լոկ կրթական, դպրոցական, խաղաղ։ Եթէ ՀԱՅՐ երկարօրէն բացատրած լինէր իւր պահանջներ, թերևս Հայոց անհուն մեծամասնութիւնն պիտի տեսնէր ու համոզուէր թէ իմաստնագոյն եղանակն այդ էր...։ Բայց «Հայք» ցարդ աշխատած է ընդհանուր սկզբունքներ բացատրել. իսկ

գործադրութեան մասին բնաւ ծրագիր չէ հրատարակած և չէր ալ կրնար հրատարակել առանց մեծ անխոհեմութեան։ Մինչև իսկ այսչափն ասել ալ կատարեալ խոհեմութիւն չէ...։

ՀԱՅՐ դադարած չէ առաջին օրէն ի վեր յոյժ կենսական սկզբունքներ յեղյեղել, բացատրել, ընդհանրացուցանել։ Առաւել քան այլ ոևէ Հայ ջանացած է պարզել թէ ի՞նչ է ներքին բնութիւնն Հայկական խնդրոյ. և կը յուսայ թէ յաջողած է փոքր ի շատէ ըմբռնել տալ հազարաւորաց թէ Հայկական խնդիրն առաւել է քան հարստահարութիւններէ ազատելու հին խնդիրն—խնդիր ազգային վերակենդանութեան է.- թէ Հայաստանի փրկութիւնն կը լինի Հայոց վերաշինութեամբն, անհատին լաւագոյն, արիագոյն, ազնուագոյն դառնալովն, որ զանազան կրթական միջոցներով կը լինի ոչ թէ բացագանչութեամբք և ծափիւք։ պարտի թագ կրելու արժանի գլուխ ունենալ որպէս զի իրօք թագաւորէ Հայութիւնն, ազատի։—թէ քաղաքական թերթ մի կարող է կարեւոր լուրեր տալ, և տակաւին իւր ոգւով և թիւր սկզբամբք ընտասակար լինիլ. ինչպէս անհատ մի կարող է հայրենասիրական այս ինչ գործն գործելու ելնել առանց Հայրենասէր լինելու. ուրեմն գործն իրօք լաւ լինելու համար՝ պէտք է որ գործիչն լաւ լինի։ Այսպիսի սկզբունք ներշնչել կեանք ներշնչել է ժողովրդին, և է գերազանցապէս դրական, չինիչ գործ։

Թէ ՀԱՅՐ լուսաւորիչ և չինիչ դեր կատարած է, այնմ հասուն հայրենասէրներ ալ վկայած են, որպէս մեզ ուղղուած քաջալերական բազմաթիւ նամակներէն կը ցուցուի։ Սովորութիւն չէ մեզ հրատարակել այնպիսի նամակներ, և սակայն ի դէպ է որ այս անգամ մի քանի կոչումներ անեմք անոնցմէ։ Ահա թէ ինչ գրած է ոմն.—

«Ուրիշներէ տարիներէ ի վեր գրելով չկրցան որոշ ըմբռնում մի տալ թէ ինչ է Հայկական խնդիրն. ՀԱՅՐ դեռ երէկ ի՛ջաւ տապարէզ և այսօր նոր կերպարանք տուաւ Խնդրոյն և... ստեղծեց ու շահեցաւ բարեկամ ու պաշտպան համակիրներու ստուար և մտացի բանակ մը։»

Այլ ոմն գրեց.—

«Ազգ. Քաղաքականութիւն խորագրով խմբագրանիդ վերջին մասն ալ կարդալով, լաւ ևս համոզուեցայ թէ Տիար Մ. Ն. էն սկսեալ որ Հայկ. Խնդրոյն վրայ ընդարձակօրէն գրած է երբեմն... Մէտէորայի մէջ, մինչև Տիար..., ձեր խմբագրականն, ցարդ գրուածներուն մէջ անման հրաշակերտ մի պարտաւոր ենք համարիլ։»

Ուրիշ մի չափազանց խանդավառութեամբ գրած է.—

«Ազգ. Քաղաքականութիւն» խորագրով յօդուածը դարերի հոսանքի մէջ հազիւ կարելի է արտադրել. ի՞նչ ներհուն և բազմակողմանի գրիչ։»

Մտերիմ ոմն որում բացատրած էինք վերջին օրերս «Հայքի» ելմտական կացութիւնն և ազգային դատին կնճռոտումն. պատասխանեց մեզ.—

«Հայքը դադրեցնելու խօսքը մէյ մ՚ալ չլսեմ։ Այսօրուան օրս ազգային շարժման միակ լուսատու փարոսն է անիկա։ Թշնամիներ ունիս, բայց ասկէ ի՞նչ։ Քեզի պէս մարդը չկրնար թշնամի չունենալ։ Բարեկամներդ աւելի շատ են, կարծածէդ շատ աւելի։ Թշնամիներդ ալ քեզի անուղղակի ծառայութիւն կ՚ընեն. և, չիտակը կուզես նէ, անանկ թշնամիներ ունենալը քեզ պատիւ է, քու արդար և աղնիւ բնաւորութեանդ վկայութիւն է։... Մտածէ անգամ մը. մինչև հիմա ունեցած յաջողութիւնդ ահագին է բաղդատելով այն բացին հետ որն գոյելու ճար կը փնտռես։ Ցառա՛ջ գնա անվհատ. ազգը ատանկ չնչին բացերը շատ դիւրութեամբ կը լեցնէ, բայց ՀԱՅՐի բացակայութիւնը կ՚ըլլայ անդարմանելի կորուստ։ Մարդ փնտռելով ժամանակ մի անցներ. ահա դու մարդ... քեզի պէս մարդերն են ճշմարիտ գործիչը ու ճշմարիտ վերածնիչը ազգաց..։»

Թէ ՀԱՅՐի համար ժամանակն եկած է կուսակցութիւն կազմելու.

Ընթերցողք գիտեն թէ ՀԱՅՐ նոր կուսակցութիւն կազմելու միտք չունէր, այլ գտնուածներն աւելի օգտակար և ազդեցիկ կացութեան հրաւիրել կամ ի կեդրոնացուցանել։ Մինչև այս օր առ այդ աշխատած է։ Բայց երեք տարուան փորձն եցոյց թէ գոյ կուսակցութիւններն միանալ չեն յօժարիր, և զանազան խմբեր կամ ընկերակցութիւնք ալ թէև յօժար՝ կուսակցութիւն մի կազմել չեն կարող թղթակցական հրաւէրներով կամ յորդորներով։

Միւս կողմանէ գործոյ ասպարէզին վրայ նոր և լաւագոյն ուժոյ մի պէտքն առաւել քան երբէք զգալի է, և ցաւագին կերպիւ զգալի։ Եւ որովհետև հակառակ մեր բոլոր աղաղակին և յորդորմանց ոչ մի անհատ, ո՛չ մի խումբ ձեռնարկել կը ուզէ ոյժ մի, լաւագոյն ուղղութեամբ գործունէութիւն մի կազմակերպել, ստիպուած է «Հայք» նախաձեռնութիւնն յանձն առնուլ։

Թէ ի՞նչպիսի կուսակցութիւն է զոր ՀԱՅՔ հանդերձեալ է կազմել։

Ճիշդ խօսքով «կուսակցութիւն մի» կազմել չէ մեր նպատակն, դնելու համար զայն ուրիշ կուսակցութեան մի քով կամ դէմ։ Ինչ որ կազմել կ՚ուզեմք՝ է ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԴՐՈՆ, կամ, այլով բանիւ, արտասահմանեան Հայաստանի տեսակ մի Պատրիարքարան։

Այդ կեդրոն կազմակերպելու համար յօրինած եմք միջոցներու ծրագիր մի որ ցարդ հրատարակուածին բոլորովին աննման է։ Նաև կեդրոնին պաշտօնին և գործունէութեան Ծրագիրն, զոր երկար երկամբք յօրինած եմք, է բոլորովին աննման ցարդ երևցածներուն կամ այլ կուսակցութեանց կողմէ ի գործ դրուածներուն։ Այդ ծրագրի ներքնագոյն կորիզն գաղտնիք մ՚է սրբազան, և կը մնայ անհրատարակելի։ Սակայն մեք լոկ մեր անհատական իմացողութեան վստահելով չի պիտի խաղամք ազգին կենացն հետ։ Մեր ուխտն է ազգին մեծ զաւակաց քան զամենայն ՄԵԾԱԳՈՒՆԻՑ ոմանց սրբագործման ենթարկել (1) մեր ըմբռնումն ազգային իրաւականին և հայկական խնդրոյն․ (2) զմեր Ծրագիր գործունէութեան․․․։

Յոյժ համառօտ եղաւ յայտարարութեանս այս վերջին էական մասն․ բայց զգօն ընթերցողն կարող է շատ բան իմանալ վերի մի քանի տողերէն․․․։

Այսուհետև «Հայքի» խմբագրականներն ուղիղ մեկնելու համար՝ ընթերցողք շատ զգոյշ և խոհեմ պէտք է լինին։

Հեռաքրքրութիւնն ալ պէտք է չափի ու կանոնի հնազանդի․ և պէտք է որ ընթերցողք և մեր այլ և այլ աստիճանի աջակիցք գոհ լինին այն ընդհանուր ակզբանց պարզմամբ որք թերթիս մէջ և այլ ազգային յայտարարութեանց մէջ յերևան պիտի կրնան գալ։

Վերջին խնդիր մի, և կ՚աւարտեմք այս անզրաւ բացատրութիւններ։

ՀԱՅՔի խմբագիրն, յետ ամենայն խորհրդածութեան, որշուած է այս պարագայում, այս լանագոյն շրջանն տալ իւր ազգային գործունէութեան։ Բայց խնդիրն լոկ իւր կամօքն չի կարգադրուիր, այլ պէտք է որ ժողովուրդն պատասխանէ նորա բաղձանաց, այսինքն ընձեռէ նըմա նիւթական անհրաժեշտ միջոցն։

ՀԱՅՔի հրատարակութիւնն պիտի շարունակուի 1894ին․ քանզի այդպիսի բերանի մի կարևորութիւնն ահագին է․ այսուհետև այս թերթն աւելի անհրաժեշտ և աւելի փափուկ դեր մ՚ունի կատարել։

Լաւ կը լինի չգիտցողներուն ալ ծանուցանել թէ այս երեք տարիներու ընթացքին մէջ «Հայք» 1,100 տոլար բաց թողուցած է․—Բ․ տարին աւելի քան Ա․ն, և այս տարի աւելի քան անցեալ տարի։ Այս Գ․ տարին թերթս հարիւր բաժանորդ աւելի ունեցաւ, բայց ծախքն ալ աւելի եղաւ, և մանաւանդ թէ զխմբագիրն շատ աւելի զբաղեցոյց։ Բժիշկն ամ ըստ ամէ ստիպուեցաւ աւելի տեղի տալ խմբագրին, ազգային գործիչին, եբժշկական եկամտի չափն զգալապէս նուազեցաւ։ Այժմ այդ 1,100 տոլարի պարտքն գոյացած է, որոյ մէկ մասին տոկոս ալ կը վճարեմք։ Ահա այսչափ միայն վերաբերութեամբ նիւթական վնասուն զոր ունեցանք։

Ի հարկէ «Հայք»ի հրատարակութիւնն այս պայմանաց մէջ շարունակել անհնար էր մեզ․ բայց յուսացինք թէ իրաց վիճակին անկեղծ յայտնութիւնն կը բաւէ յօգնութիւն փութացունելու զՀայրենասէր աջակիցս։

Աւելին կայ, սակայն, այդ անցեալ բացին քով կայ նոր պահանջ։ Խմբագիրն պարտի օգնական մ՚ունենալ և շարունակել «Հայք»ի հրատարակութիւնն ի Նիւ Եորք, իսկ ինքն պիտի ստիպուի մեկնիլ Նիւ-Եորքէ և Ամերիկայէ ի գործադրութիւն Ծըրագրին։ Պիտի կրնա՞յ մեկնիլ, պիտի կրնա՞յ մեկնիլ 1894ի սկիզբներն—այդ հարցման պատասխանն ժողովուրդն պիտի տայ իւր արագ կամ դանդաղ օժանդակութեամբ, իւր առատ կամ անառատ նպաստիւք։

Ամերիկայի և Եւրոպիոյ Հայ Գաղթա-

կանութիւնք ոչ սակաւ դրամ տուած են ազգային դատին համար, գրեթէ շարունակ հանգանակութիւն կը լինի յօգուտ այս կամ այն գործի։ Նոքակարող են, եթէ ճիգ մի անեն, հայթայթել մեզ ալ զհարկաւորն։

Անցեալ տարի մի քանի հարիւր տոլար հանգանակեցին հայրենասէր խմբեր և անհատներ ի նպաստ «Հայք»ի։ Պարզապէս թերթիս հրատարակութեան համար ինչ որ զոհեցին, ի զուր չզոհեցին։ զի այս տարի «Հայք» աւելի տարածուեցաւ, աւելի ծառայեց, դառնալով լաւագոյն գործի և առաւել գնահատեալ բերանն հայ հայրենասիրաց։

Եթէ մօտէն և հեռուէն այս անգամ ևս գործոյն ընդարձակման համեմատութեամբ օգնութիւններն չափուին ու մատուցուին, կը յուսամք թէ մինչև մէկ տարի, 1894ի այս ամսուն, Հայութիւնն կը տեսնէ միաբարական երևոյթ մի, և ազգային դատին ընթացքն քաջալերական ուղղութեան մէջ կը գտնուի։

Հայրե՛նասէրներ, գործնական պատասխանի կը սպասեմ անձկանօք։

Տնօրէն-խմբագիր ՀԱՅՐԻ
Մ. Ս. ԴԱԲԻԷԼԵԱՆ

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ

ՑՕԴՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

Հայոց պատմութիւնն կրնայ կարծեմ աւելի նշանակիչ և խորին բաժանում մի կրել շրջանաց, տարբեր այն արտաքին կամ հարստական բաժանումէն որ դասական եղած է։

ԱՌԱՋԻՆ — Կազմաւորման շրջան, որ նախապատմական ժամանակներէ կը սկսի մինչև մերձ Ա. Տիգրան։ Այդ շրջանի մէջ դեռ Հայաստանի կազմիչ տարրներն կային բազմաթիւ մանր թագաւորութեանց ձևին տակ, որպէս կը յայտնեն սեպագիր արձանագրութիւնք։

ԵՐԿՐՈՐԴ — Միութեան և միապետութեան վերելման շրջան, որ կը սկսի քիչ ժամանակ յառաջ քան զՏիգրան Հայկազն և կը յանգի ի Տիգրան Բ. իրրեւ ի գագաթնակէտ։ Կ'երեւի թէ ոչ բաղում ժամանակ նախ քան զՏիգրան Ա՝ Հայաստան երկրի թագաւորներէն մին յոյժ զօրանալով իւր գերիշխանութիւն ընդունելի գործեց միւս թագաւորաց և այսպէս միապետութիւնն հաստատուեցաւ, պայմանաւոր թագաւորք մնան իբրեւ տանուտեարք կամ նախարարք իրենց նահանգին, և ժառանգօրէն շարունակէ իւրաքանչիւրի պայազատութիւնն։

ԵՐՐՈՐԴ — Ինկում կամ անկման շրջան, որ արդէն Տիգրան Բ.ի վերջին տարիներէն կը սկսի և կը յանգի Ռուբինեան վերջին թագաւոր Լեւոնով։ Տիգրան Բ.ի օրով է որ Հայաստանի ինքնակալն Պարթեւաց իսկ նախագահ կը ճանչուի յԱրեւելս՝ և կունենայ իւր վեհապետութեան ներքև օտար հարկատու երկիրներ։ Սակայն չատ երկար ատեն չմնաց ի ձեռս Տիգրանայ Մեծի նախագահութեան գաւազանն։ Հռովմայեցիք յաղթեցին արեւելեան միապետաց այդ հզօրագունին, և Հայաստան սկսաւ իւր խոնարհող ընթացքն։ Այդ վայրավէտ գնացք տեւեց իբր 1,400 տարի. այդ բոլոր միջոցին Հայաստանի ամբողջ կամ մէկ մասն պահպանեց ազգային ներքին կառավարութիւնն, երբեմն թագաւոր ունենալով երբեմն հայ կամ օտարազգի վարիչ։ 1393 Նոյեմբերին, այսինքն ներկայէս ճիշդ 500 տարի առաջ, մեռաւ Լեւոն Զ., վերջին գահակալն Ռուբինեան գահուն, և սկսուեցաւ

ՉՈՐՐՈՐԴ - Քայքայման շրջան, որ կը տեւէ մինչև մեր ժամանակն։ Այդ շրջանին մէջ Հայաստանի Հայ տարրն նուազելու, գաղթելու միտած է, եւ գաղթականութիւնք օտար տեղերու մէջ ընկղմելու միտած են։ Հայերէն լեզուն ևս օտար տարրներով խառնուած, ապականած է։ Վերջապէս Հայ անհատն շարունակ օտարի ճնշող լուխանութեան ներքեւ տկարացած է բնաւորութեամբ և գերիի պիտերով վարակեալ է։ Ազգային ինքնօրինութիւնն կորուսած լինելէ յետոյ՝ կորուսանելու վերայ եղած է միշտ նաև անհատական վեհանձնութիւնն և առնացի հանգամանքն։ Հայութեան քանակն նուազած և որակն ստորնացած է. այդ երկու նշաններ

րով կը ճանչուի ազգի մը քայքայումն։

ՀԻՆԳԵՐՈՐԴ վերածնական շրջան, որ ներկայ երիտասարդ սերնդեան օրով սկսելու ճիգ կը լինի։ Այս շրջան առ այժմ ենթադրական է, զի վստահ չեմք թէ ճշմարտիւ սկսած է։ Բազում ուսեալ և անուս երիտասարդներ, մինչև անգամ հայրենասէր երեցող մարդիկ այնպէս կը վարուին, այնպիսի թուլութեամբ և դանդաղութեամբ կը շարժին որ լուրջ գործիչն պարզ կը տեսնէ թէ այդ մարդիկ դեռ ըմբռնած չեն ներկայ պատմական պահուն ահաւոր նշանակութիւնն Հայ ազգին համար։ Միւս կողմանէ կան կարգ մի ծայրայեղներ և միակողմանի գործիչներ որք խորին ըմբռնում չունենալով թէ ազգի վերածնունդն ին՛չ զգուշաւոր և իմաստուն մանկաբարձութիւն կը պահանջէ՝ յախուռն միջամտութեամբ բնական ընթացքն կը խանգարեն և վիժման վտանգ կը սպառնան։

Հայե՛ր, գործի՛չներ, երիտասարդներ, սրտի խորին յուզմամբ և աչք յարտասուս կ'երդուընցունեմ զձեզ որ ձեր գերագոյն ճիգերն թափէք, որ տաք առանց ագահութեան, որ գործէք առանց թուլութեան, որ ամենայն խղճմտութեամբ և երկիւղածութեամբ վարուիք հայկական դատին հետ որ յիրաւի սրբազան դատ է։ Հրաժարեցէք կուսակցութիւն պաշտելէ, և մանաւանդ թողուցէ՛ք գծուծ հաշիւներն ու անվայել վարմունքն. իւրաքանչիւրդ ջանացէք անհատապէս, անձնապէս վերածնել իբրև մարդ, կրթեցէք դուք զձեզ անդադար ջանիւք և աշխատութեամբ, մշակեցէք քաղաքային, ընտանեկան և անհատական առաքինութիւններ, զօրացէ՛ք, լաւագոյն, և ազնուագոյն եղէք շարունակ, և բազմացէք ու աճեցէք թուով։ Մանաւանդ մօտեցէք իրարու սիրով, ձեռն ի ձեռն տուէք, սիրեցէք զ Հայաստան, խաղացէք ու միացէք։ Քայքայման գործողութեանց ճիշտ հակառակն պէտք է կատարել ահագին ցաւ կրելով անսպառ համբերութեամբ եւ յարատեւ անձնուիրութեամբ. մեծ է գործն, մեծնանք եւ մեք գործով եւ սրտով։ Յառա՛ջ։

«ՀԱՅՔ»

Թղթակազմ

Ա. տարի 1 տոլար 50 սէնթ կամ 7 Ֆր. 50ս.

Բ. տարի 2 տոլար կամ 10 Ֆրանք

ԲԱՑՈՒԱԾ Է
ՀԱՅՔԻ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1894 Տարւոյ

ՀԱՅՔ շուտով կը թեւակոխէ իւր չորրորդ տարին։ Այս թերթին երկարակեցութիւնն պատիւ կը բերէ Հայ ժողովրդեան, վասն զի Թուրքիոյ մէջ ոչ բնաւ, և Ռուսիոյ մէջ ալ հազիւ բաժանորդ ունենալով, փոքրաթիւ գաղթականութիւնք տուին անոր սնունդ։

Ամերիկայի Հայ գործաւորներն՝ մինչ Թուրքիոյ մէջ լրագիր կարդալ միայն էֆէնտիներու մենաշնորհն կը համարէին, այս երկրին մէջ իրենք ալ թերթի բաժանորդ գրուեցան էֆէնտիի նման, և բաժանորդագինն ալ վճարեցին էֆէնտիներու չափին անման, և մինչև անգամ նուէր ալ վրան աւելցուցին որով բոլորովին ազնուագոյն հանդիսացան։

Այս խօսքեր շողոքորթութիւն չեն, այլ ճշմարիտ քաջալեր և արդար գովեստ են որ Միացեալ Նահանգներէն դուրս գտնուող Հայ գաղթականութեանց ոմանց ալ կը տարածուին։

Այս երրորդ տարին Հայքի բաժանորդաց թիւն 400ն անցաւ. իսկ շրջաբերութիւնն 600ի մօտ եղաւ։ Հաւանական հաշուով ընթերցողաց թիւն աւելի է քան 3,000։

Ուրիշ գովելի բան մ'ալ այն էր որ այս տարի բաժնեգներն շատ աւելի շուտով վճարուեցան քան նախորդ տարիներն։

Այժմ 1894 տարւոյ բաժանորդագրութիւնն բացուած լինելով, տեսնենք թէ ժողովուրդն որքան յառաջդիմութիւն պիտի ցուցնէ. ո՛րքան աւելի թուով բաժանորդ պիտի գրուի, և ո՛րքան աւելի շուտով պիտի մեզ հասցունէ բաժնեգինն քան անցեալ տարի։

Պէտք է յիշեցունեմք թէ «Հայք» ի խմբագրութիւնն պիտի լինի մեր ձեռքն 1894ին ևս, եթէ յաջողիմք Նիւ Եորքէն հեռանալ, ինչպէս որ յոյս ունիմք, դարձեալ պիտի շարունակեմք առաջնորդող խմբագրականներն գրել մեք ինքնին, և թերթին ուղղութիւնն պիտի միայ նոյն։

Երանի՜ թէ մեր աջակիցք և բաժանորդք այնպիսի փութով և ժրութեամբ շարժէին ու գրուէին որ անյապաղ կարենայինք բաժանորդաց ամբողջ ցանկն շինել և ամեն այլ պատրաստութիւն կատարելով՝ հրաժեշտ առնուլ Նոր Աշխարհէն։

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԲԱՂԱՔԱՑԻՈՑ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՆ Ի ԹՈՒՐՔԻԱ

Վերջերս, մասնաւորապէս Մարսուանի դէպքէն իվեր, Թուրք կառաւարութիւնն աւելի խիստ միջոցներ կը փորձէ Ամերիկացւոց կրթական աշխատութիւնն Թուրքիոյ հայոց մէջ խոչընդոտելու։ Բ. Դուռն այժմ կը պահանջէ որ առանց մասնաւոր հրամանագրի բնաւ դպրոց չբացուի։ Այս հրաման առաւել քան այլ ամեն եւրոպական ազգաց կ'ազդէ Ամերիկացւոց, զի, ըստ Տէյլի Նիւզի մէջ յիշուած հաշուոց, իբր 40 հազար աղայք կ'ուսանին Ամերիկեան հաստատութեանց մէջ, առ նուազն 150 ամերիկեան քաղաքացւոց պաշտօնավարութեամբ։ Ամերիկեան դեսպանն կը պնդէ թէ դաշնագրական իրաւունք ունին ամերիկացիք իրենց կոչումներն ի գործ դնել ի Թուրքիա, և ասոր համար յատուկ թոյլտուութիւն հարկաւոր չէ, քանզի իրենց արհեստ և պաշտօն ի գործ դնելու հրաման ընդունիլ պիտի լինէր դաշնագրական իրաւունքներն սեղմել։

Նիւ Եորքի OUTLOOK շաբաթաթերթն խօսելով ամերիկեան քաղաքացւոց սպառնացեալ իրաւանց մասին, կ'ասէ թէ, թէպէտ ամերիկա չունի արտաքին քաղաքականութիւն՝ բառին եւրոպական իմաստով, պարտի սակայն ա՛յն արտաքին քաղաքականութիւն ունենալ որ կը կայանայ երկրագնտի ո և է կողմն գտնուող իր քաղաքացիներն ազդուապէս պաշտպանելու մէջ։

Նիւ Եորքի World թերթն ևս յօդուած մի կը նուիրէ այս խնդրոյ՝ առթիւ ամերիկեան քաղաքացի եղած հայու մի որ Սելանիկի մէջ բանտարկուած էր Սեպտեմբերին։ Խմբագիրն կը հարցնէ թէ Նախագահ Ռուզվելտ ինչ պիտի անէ այս Հայ ամերիկացւոյն համար զոր Թուրք պաշտօնեայք ամերիկացի չեն ճանչեր և բանտարկած են վասն ոչ ուրիշ ոճրի բայց միայն վասն զի Թրքութիւնն ուրացած և ամերիկեան քաղաքացի մնալ երդուած է։

Այս անձն բանտէն ազատուելով հետևեալ տողերն գրած է։-

ՆԱՄԱԿ ԲԱՆՏԷՆ ԱԶԱՏՈՒԱԾ ՀԱՅԷՆ

Անպատում ուրախութեամբ կը գրեմ այս նամակս, վասն զի անգամ մ'ևս ազատեցայ բանտէն և անկիրթ, աղտոտ, անճոռնի բանտարկելոց անտանելի ընկերութենէն։ Բանտէն երկու նամակ գրած եմ, բայց վստահ չեմ յղուեցան կամ ոչ։ Ուրեմն նորէն յիշեմ հոս համառօտիւ թէ ինչ հանդիպեցաւ ինձ։ Երբ Սելանիկ հասայ, ուրկէ նաւ առնլով պիտի երթայի Պոլիս, երեք օր գարանթինայ կրեցի, իբր թէ հնտախտ կայ եղեր։ Չոր գետինն պառկեցուցին մեզ և վերջն ալ անկողնի ծախք առին։ Երբ գարանթինայի ապաշխարաքն աւարտեցի, աւելի ծանրն ըսկսաւ. անցագիրս առին, և քանի անգամ որ գացի պահանջել, պատասխանեցին «վաղն եկ առ.» Վերջապէս որոշեր են թէ, որովհետև իմս ամերիկացւոյ անցագիր է, պէտք է զիս Ռուսովա ուղարկեն, խնդրեցի որ թոյլ տան ինձ ամերիկեան հիւպատոսն տեսնելու, չտուին. գիշերով զիս անկողնէ հանեցին և տարին ուրիշ քաղաք մի ուղղակի բանտ։ Ոչ գիտէի ո՛ր քաղաք եմ և ոչ ալ կը հասկանայի թէ ինչո՛ւ բանտարկեցին։ ալ քովս ալ եկող չեղաւ չորս օր։ Վերջապէս մէկուն խորհրդովն աղերսագիր մի ուղղեցի վալի փաշային, յորում բացատրեցի թէ ծեր մայրս տեսնելու համար հին հայրենիքս կ'ուզէի այցելել։ Ութերորդ օրն եկան հանեցին զիս բանտէն, կարծեցի թէ լմնցեր է... բայց ոչ, տարին զիս Փրէզովա և դարձեալ ուղղակի բանտ։ Հետևեայ օրն գայմագամն հարցփորձի ենթարկեց զիս, և ես իրեն աւելի մանրամասն բացատրեցի ուղեւորութեանս նպատակն։ Յաջորդ օրն հրաման եկաւ ինձ թէ պարտիմ յաջորդ կառախմբով դուրս ելնել օսմանեան հողէն։ Բերին զիս ոստիկանք մինչև ռահմանագլուխն, և նետեցին Սերվիոյ հողին վերայ։ Անկէ շրջեկառքով եկայ Նիշ, ուրկէ կը գրեմ ահա այս ողջունագիրս։

Աւա՜ղ, ծերունի և անձկալի մայրիկ իմ անուշ ու սիրելի, աւա՜ղ, զքեզ տեսնելու և օրհնութիւդ առնելու բաղդն պիտի չունենամ...

* * *

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԵՐՆ

ՀԱՅ ԳՈՐԾԱՒՈՐՔ ԿԸ ՀԱՂԱԾՈՒԻՆ ՕՊՐՆԻ ՓՈՂՈՑՆԵՐՈՒ ՄԷՋ

Օպըրնի կօչկի գործարանին գործաւորք անցեալ օր գործադուլ արած էին, և այդ առթէն օգուտ քաղելու համար ուրիշ տեղէ Հայ և ուրիշ օտարականներ եկած էին աշխատիլ նոցա տեղ։ Հետևանքն եղաւ ցաւալի յուզմունք փողոցաց մէջ, կռիւ յորում մի քանիներ վիրաւորեցան։ Կռիւէն յետոյ օտարականք Մէյն հիւրանոցն քաշուեցան, որոյ առջև երկու հազար հոգի խռնուեցան, թէև ոչ ոք համարձակեցաւ ներս մտնել։

Հետևեալ հեռագիրն Օպրնի կոչկակարաց կոմիտէէ յղուած է Ուօշինկթն, Խորհրդարանի անդամ Նելսն Տինկլին։-

«Հաճեցէք մեզ տեղեկացուցանել թէ Մաք Քինլի օրէնքին ի՛նչ յօդուածն է որ Ամերիկացի գործաւորներն կը պաշտպանէ Եւրոպայի աղքատ գործաւորաց դէմ։ Մեք այժմ դորա պաշտպանութեան պէտք ունիմք ընդդէմ այն Հայ և Իտալացի կօչկակարաց որք ներածուած են հոս և մեր քաղաքն այցելելով Ամերիկացի պարկեշտ գործաւորաց տեղերն կ'առնուն։»

Լինի և Պոսթընի Հայերն իմանալով այս անհաճոյ դէպքերն, կը փութան ժողով մ'անել և իրենց կոմիտէ երկու պատգամաւոր կը յղեն յՕպըրն, Պարսէլ և Վոկն (Բարսեղ և Վահան) որպէս զի Հայերն համոզեն ձեռնթափ լինիլ և ի սէր խաղաղութեան հեռանալ Օպըրնէ։ Լինի թերթերէն միոյն մէջ այս արարքն հրատարակութեան կը տրուի Հնչակեանց կոմիտէ։ Եւ յիրաւի պատգամաւորաց ջանքն ապարդիւն չիմնար, զի, որպէս կը ծանուցանէ Պոսթընի «Հերալտ»ն, Հայ գործաւորք հետ զ հետէ կը թողուն գործն և կը մեկնին Օպըրնէն։

Այս ցաւալի դէպքն նոր դաս մ'է Հայ գործաւորաց համար։ Մեք չեմք կարող ձեռնարկել աստ քննել այն խնդիր թէ գործաւորական միութեանց գործադուլներն մինչ իրաւացի և խոհակա՞ն են, և թէ ուրիշ գործաւորք իրաւունք ունի՞ն երթալ անոնց տեղ գրաւելու։ Խնդիրն ուրիշ է այժմ, այս ինքն թէ Հայ գործաւորք խոհեմութիւն արած կը լինի՞ արդեօք գործադուլողներու տեղն աշխատելով։ Այսպիսի տեղեր գրաւել իրենց շահաւո՞ր է արդեօք։ Այդ հարցման պատասխանն փորձառութիւնն որոշ կերպիւ տուած է։

Ամենևին չարժեր որ մի քանի օր աշխատելու և մի քանի տոկար շահելու համար մեր գործաւորք իրենք զիրենք հալածանաց, նախատանաց, տղայոց օհներուն, երիտասարդաց քարերուն, կանանց տդէտ անէծքին ենթարկեն, և ծանր կամ թեթեւ վերքեր ստանան։ Մեր գործաւորք լաւ գիտեն թէ Միութիւնք յիրաւի կամ յանիրաւի կը խոժոռին երբ տեսնեն թէ կարգ մի օտարականներ իրենց գործադուլի նպատակն ի դերև կը հանեն իրենց գործն յանձն առնլով։ Միութեանց անդամներուն մէջ կան որ իրենց բարկութիւն չեն կրնար զսպել և յարձակումներ կ'անեն։ Երբ միջամուտ գործաւորներն գործարան երթան կամ անկէ վերադառնան, ժողովուրդն անոնց կը սպասէ ճամբուն վերայ, և կը սկսի քար նետել, ճամբան խափանել, հրել, գետին տապալել, կառքի և ձիու ակ կսխոտել ջանալ և որ ի կարգին։ Բազմութեան մէջ յանցաւորն գտնել դժուար է, մանաւանդ թէ ոչ ոք յանցաւոր կը համարի այդպիսիներն, զի միջամուտ գործաւորաց ընթացքն նուաստ և գծուծ մարդու գործ կը նկատուի։

Թերթերն ալ այդպիսի օրեր էջեր կը լնուն Հայ գործաւորաց աննպաստ, և անոնց անունն իտալացւոց անպատուեալ անուան կ'ընկերացուցանեն։ Դիւրին է գուշակել թէ ընթերցող հազարաւոր քաղաքացիք ինչ համարում կը ձևացուցանեն Հայոց վերայ։

Արդէն գործադուլք ալ ընդհանրապէս շատ չեն տեւեր, գործապետ և միութիւն հասկացողութեան կը յանգին և յայնժամ միջամուտներուն ճամբայ կը տրուի։

Եւ մեր եղբայրներ արատաւորեալ անուամբ և յաճախ վիրաւորեալ անդամով կը ստիպուին գլխիկոր անցնիլ երթալ։

Ուրեմն լաւ է որ մեր Հայ եղբարք, մինչև իսկ երբ անգործութենէ ստիպուին, չերթան գործադուլ անող Միութեանց տեղն լնուլ։

ՋԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

«ՏԷյլի Նիւզ»ի մէջ կը կարդամք.— Անցեալ ամսոյ 28ին Պալտէն յղեալ հեռագրի մի վերաբերութեամբ Անկլեհայկական ընկերակցութիւնն զհետեւեալն կը յայտարարէ.— (1) Դուռն Փրոֆ. Թումայեան և Գայաեանի և հինգ կախեալներու և յԱրաբիա և Պարսպարիստան աքսորելոց դատավարութեան արձանագրութիւններն արդէն հրատարակած էր Թուրք մամլոյն մէջ։ (2) Այդ պաշտօնական տեղեկագրութիւններ խնամով քննած է ընկերակցութիւնս և այն եզրակացութեան հասած է թէ ամեն անաչառ ընթերցող կրնայ տեսնել թէ դատապարտելոց ոչ մին յիրաւի պատժապարտ գտնուած է։ (3) Լորտ Բոզպերիի յայտարարութիւնն ի Խորհրդարանի թէ «կատարելապէս յստակ կ'երեւի թէ դատաստանն արդար դատաստան չէր» կը հաստատուի Սուլթանի հրամանաւն իսկ հրատարակեալ վաւերագրօքն։ (4) Թէ Տէր Թումայեանի քարոզներն զորս խռովայոյզ լինել կը հռչակեն, էին ճշդիւ աւետարանական։ (5) Տեղեկութիւն ստացուած լինելով թէ նոր հալածանքներ եղած են ի Մարսուան, ուր Փրոֆ. Թումաեանի երկու եղբարքն բանտարկուած են յանիրաւի, և տեսնելով թէ բրիտանական կառավարութիւնն կարող եղած չէ հայ քրիստոնեաներն ըստ արժանւոյն պաշտպանել, որոշուած է որ խնդրուի Տէր Կլատսթընէ ընդունիլ բողոքական պաշտօնէից և Հայոց խառն պատուիրակութիւն մի առ ի պնդել Նորին Վեհափառութեան կառավարութեան առջեւ Անգլիոյ պարտաւորութիւնն առ Հայս Թուրքիոյ և ցուցնել կորովի գործողութեան ստիպիչ հարկաւորութիւնն։

Պոսթընի ԲՐԻՍՁԵԼՆ ՐԷՃԻՍԹԸՐ թերթի Հոկտ. 12 թուոյն մէջ խմբագրական մի կայ Վեհ. Մկրտիչ Խրիմեան Հայրիկի և Հայոց վերայ։

Պալթիմորի բժշկական գոլեճին մէջ այս տարի հայ ուսանողք են, Ռուբէն Ուրֆալեան, Ատանացի. Ասատուր Գլըճեան, Ալէքսանդրացի. Աբրահամ Շահվազեան, Կիւրինցի. Նազարէթ Գալուստեան, Ատանացի։ Պետրոս Թ. Թաշճեան, Տիգրանակերտցի, Աբրահամ Եուսուֆեան, Խարբերդցի. և Տոքթոր Յ. Գ. Փէլթէկեան, Ալէքսանդրացի. որ անցեալ տարի ընթացքն աւարտած լինելով՝ այս տարի մասնագիտութեան մի կուտայ ժամանակն։

ԲՐԻՍՁԵԼՆ ՐԷՃԻՍԹԸՐ շաբաթաթերթի մէջ «Մայր Արաքսի»ի ընտիր անգլիերէն թարգմանութիւնն հրատարակուած է։ Թարգմանիչն է ագնիւ օրիորդ Ալիս Աթոն Պլէքուէլ, խմբագիր ԿԱՆԱՆՑ ԺՈՒՌՆԱԼԻՆ

ՍՊԱՆՆՈՒԱԾ ՀԱՅԵՐ

(ՓՐԷՍ լրագրին մէջ կը կարդամք հետեւեալն, զոր կ'արտատպեմք ամենայն վերապահութեամբ, զի բնաւ ճշմարտանման չէ։)

Սեպտ. 30ին ռուս վաճառական մի Սէրայ Պուռնուլի մօտ երկաթ նետած էր, և երբ բեռն ստացաւ, երկաթն հանեց ճամբայ ելնելու համար։ Երկաթն ծանր բանով մի բռնուած լինիլ կը թուէր։ Շատ ճգմամբ հանեցին, և ահա հետն ելաւ 15 ջուվալ, որ քննուելով գտնուեցաւ մարդկային դիակներով լեցուն, անձնիւր ջուվալ 15—20 դիակ պարունակելով։ Անդրագոյն քննութիւնք ցուցին թէ մարմինքն հայ քաղաքական բանտարկելոցն էին։

Օտար դեսպանք գանգատած էին Դրան թէ բանտերն խճողեալ են հայ բանտարկեալներով, այս գանգատանց վերջ տալու համար անոնցմէ 300ն նաւ դրած, սպաննած և ծովն լեցուցած է Թուրք կառավարութիւնն...

Ռուս նաւապետն ռուսական դեսպանին ծանոյց այս սոսկալի գիւտն, և որովհետեւ սպաննուածներուն մէջ ռուսահպատակներ կրնան գտնուիլ, անմիջապէս հեռագիր ուղղուեցաւ ի Բէդէրպուրգ, հրահանգ խնդրելու թէ ինչպէս պէտք է վարուիլ այս դէպքին մէջ։

Հայ լուսանկարիչ մի Տէր Մինաս Զերաղի պատկերն պատրաստեր է, մեծ և պզտիկ չափով. մեծն կը ծախէ 50 սենթի (երկու ֆրանք ու կէս) իսկ փոքրն (քապինէթ սայզ) 25 սենթի (մէկ ֆրանք 25 սանթիմ)։ Գնել ուզողք պէտք է գրեն առ լուսանկարիչն ի Պոսթըն—

Mr. H. Chickering
425 Washington St.
BOSTON MASS.

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Ազգային ատենախօսութեանց այս հաւաքածոյին մէջ ընթերցողք պիտի գտնեն հայրենասիրութեանց և Դրան հակահայ քաղաքականութեան ահաւոր նկարագիրն և միանգամայն Ամերիկայի Հայոց ազգային շարժմանց առաջնորդողի մի փորձառութեան և ձգտմանց շրջափոխութիւնն։

Գին 20 սէնթ կամ մէկ ֆրանք։

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, 21 դաս 16 պատկերօք և յաւելուածով ազգային ու օտար հատընտիր ընթերցուածոց, երկասիրութիւն Մ. Ս. Գաբրիէլեանի, 1891, գին 1 թալէր կամ 5 ֆրանք։

 

SECOND HAND BICYCLES

ԳՈՐԾԱԾՈՒԱԾ ՀԵԾԵԼԱՆԻՒՆԵՐ

Այնպէս կը նորոգենք որ նորի պէս կ'երևի և կը վաճառենք այն գնով որ մեզի արժած է' վասն զի չենք ուզեր գալ եղանակին պահել զայն։ Հեծելանիւներն կրնաք հոս գործածել և ալա տանել ձեր սիրելի հայրենիքն։

Լ. Մ. Ալեքսանդր, L. M. Alexander
191 Front st. Worcester Mass.

Պատիւ ունինք ծանուցանել արգոյ Հայ հասարակութեան թէ առանց քարի, և միանգամայն մաքուր ու ընտիր պուլղուր կը վաճառենք, փաունտը 8 սէնթի միայն, փութով հրամանները կը կատարուին միայն անոնց որք կանխիկ կը վճարեն։

Նիւ Եորքի եւ Ճէրզիի Հայերն եթէ 25 փաունտէ աւելի գնելու լինին փոխադրութեան ծախքը մենք յանձն կառնունք վճարել։ Իսկ ուրիշ քաղաքաց մեր յաճախորդներն առնուազն 50 փաունտ գնելու են փոխադրութեան ծախքէ ազատ մնալու համար։

Փորձեցէք մեզ և գոհ պիտի ըլլաք։
S. HAUVSEPIAN
582 PALISADE AVE.
JERSEY CITY HEIGHTS, N. J.,

FRANCOIS FRENTZ
ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԴԵՂԱԳՈՐԾ
311 SEVENTH AVE. NEW YORK
27րդ և 28րդ փողոցաց մէջն

Ո՛ Հայեր,

որ կը բնակիք Ուուսթըրի մէջ, ձեր ոտքերն յարմար են իմ դիմացկուն կօշիկներ, և ձեր բանին կուգան իմ գներս։ Իմ անունս Լաշանս է, և խանութս կը գտնուի Ֆրոնթ սթրիթի 60 նիւմէրոն։ Միայն մէկ գին ունիմ. պազար չեմ ըներ։ Ո՛վ որ կ'ուզէ չխաբուիլ և շունչը չհատցունել գին կտրելու համար, և ո՛վ որ չուզեր որ ոտքն նասըր լինի, թող գայ և իմ ընտիր կօշիկներն փորձէ։

T. LACHANCE, կօշկավաճառ
60 Front St. Worcester, Mass.

THE WORCESTER MECHANICS
SAVINGS BANK
311 Main St. Worcester, Mass.

ՎՈՒՍԹԸՐ ՄԷՔԷՆԻՔՍ ՍԷՅՎԻՆԿՍ ՊԷՆՔ

Վուսթըրի Հայերն իրենց խնայողութիւններն կրնան ապահովապէս դնել վերոյիշեալ պանքային մէջ, որ շահ ալ կը ձարէ Յունվար, Ապրիլ, Յուլիս և Հոկտամբեր (?) ամսոց կէսէն հաշուելով։

MORRISON & Co.
88 Fulton Street New York

ՄՕՐԻՍԸՆ ԵՒ ԸՆԿ.

ՎԱՐՊԵՏ ԴԵՐՁԱԿ

Կը շինեն պատուական ձեռք մի ըզգեստ 20 տալերով, օվըրքոթ 20 տալերով և փանթալոն 5 տալերով։

ՊԱՏՈՒՀԱՆԻ ՎԱՐԱԳՈՅՐՆԵՐ, աժան եւ պատուական պիտի գտնէք մեր խանութն, հատն 20, 25, 30, սէնթի։ Նաեւ պատի թուղթ։ Հրամեցէք ի

250 Main ST. (Մէյն փողոց)
WORCESTER MASS.
Ֆրանք Հօէի մթերանոցն

BUSH & CO.
ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.
ԴԵՂԱԳՈՐԾ
(Հաստատեալ ի 1849)

65 Front St. Worcester, Mass.
Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

C. F. RANDALL

177 Front ST. Worcester, Mass.

Պատիւ ունիմ ծանուցանել Ուսթըրի արգոյ հայ հասարակութեան թէ իմ վերայիշեալ խանութին մէջ կօշիկներ և րըպըրներ կը վաճառեմ այնպիսի գներով և այնպիսի կերպով որ անշուշտ հաճելի կը լինի իմ հայ հաճախորդաց ։

Ծանուցանելով ևս թէ բացարձակապէս և ՄԻԱՅՆ ՄԷԿ ԳԻՆ ունիմ, կը սպասեմ ձեր հրամանաց և կը մնամ յարգու-
ն ք Ձերդ Ռանտոլ

NATIONAL MUTUAL INSURANCE Co.

WORLD BUILDING, NEW YORK

ԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կենաց Ապահովագրութիւն ին՞չ ըսել է, գիտէ՞ք, Հայեր ։

Եթէ չգիտէք, ձեզ ըսենք մենք ։

Մարդ մի, որոյ առողջական վիճակը քննելով գոհացուցիչ կը գտնուի բժիշկին կողմանէ, ընկերութեանս կը վճարէ տարին այսչափ թալէր, 20 կամ 30 կամ աւելի, ըստ հասակին, և երբ մեռնի, իւր ժառանգորդք կ՚ընդունին հազար թալէր, եթէ պայմանն հազար թալէրի է, կամ մինչև հինգ հազար թալէր, ըստ պայմանին ։

Երբ մէկը այսօր անդամ ընդունուի, և իւր առաջին տարեկան տուրքն վճարէ, և դժբաղդաբար վաղն մեռնի, պայմանադըրեալ հազար կամ աւելի թալէրն կը վճարուին ընկերութեանս կողմանէ այն ժառանգորդին որոյ յօգուտ պայմանն կնքուած լինի ։

Այս մասին հետաքրքիր եղողներու «Հայք» ի խմբագիրն կրնայ աւելի տեղեկութիւն տալ

ՎԱՅԵԼՈՒՉ ԶԳԵՍՏՆԵՐ

գնելու համար

եկ

THE STAR CLOTHING Co.

Գին կտրել չկայ

Վասն զի մէկ գին միայն ունի, բայց չափաւոր և ճիշդ գին ։ Մեր հասցէն է

385 Մէյն Փողոց, Ուուսթըր,

385 Main St. Worcester, Mass.

Յակոբ Էքիզեան Կարապետ Էքիզեան

30 Eddy Street 28 South Margin Street

Providence R. I. U. S. A. Boston Mass.

ԵՂԲԱՐՔ Յ. ԷՔԻԶԵԱՆ

Յովհաննէս Էքիզեան Գէորք Էքիզեան

Էքիզեան եղբարց թէ Միացեալ Նահանգաց և թէ Կ. Պոլսոյ կամ Խարբերդու տուներու շահերն միևնոյն տան վերաբերելուն, մանաւանդ Միացեալ Նահանգաց դրամատանց միոյն հետ համաձայնութիւն մի գոյացուցած ըլլալով Եւրոպիոյ կողմերըն ստակի փոխադրութեան գներուն բաւական տարբերութիւն մը ձեռք բերած ըլլալով, կը համարձակին ըսելու թէ ամենէն վար գներով ստակի փոխադրութիւններ պիտի ընեն Եւրոպայի կամ Թուրքիոյ կողմերն ։ Անոնք որ կը կարօտին ըստակ ղրկել դէպի Եւրոպա կամ Կ. Պօլիս, Ադանա, Տիգրանակերտ Խարբերդ, Մալաթիա, Բալու, Ակն, Արաբկիր, Չիմիշկէզէկ, Չունքուշ, ընդհանուր շրջականերուն, պէտք է ուղղակի գրեն յիշեալ տանց հասցէներուն, որով իրենց փափաքանաց համեմատ պիտի ստանան անմիջապէս իրենց փոխանակագրերն ամենէն գոհացուցիչ կերպով, և փոխարէնը պիտի գանձուին առանց դժուարութեան և առանց որ և է ծախքի մի հարկ ունենալու ։

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ. Էվինիու Նիւ Եորք

26դ և 27դ. Փողոցներուն միջև

Դեղագրեր կը շինուին խնամով

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ